



ԵՐԱՌԵՍՏԱՅԻՆ, 28 ՅՈՒՆԻՍԻՆ, 2019

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո լամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 42

ԾԱՐԱԻ ԵՄ ՔԵԶԻ, ՏԷՐ

Ինչպէս եղջերուն վագող ջուրերուն կը փափափի,
այնպէս ալ ես, ով Աստուած քեզի կը փափափիմ:
Ծարաւ եմ Աստուծոյ, կենդանի Աստուծոյն.
Ե՞րբ պիտի գամ՝ ներկայանամ Աստուծոյ:
Օր ու գիշեր՝ արցունքս է կերակուրս,
մինչ օրն ի բուն մարդիկ ինձի կը հարցնեն. «Ո՞ւր է Աստուածդ»:
Սակայն ինչն՞ կը տխրիս, ով իմ անձս, կամ ինչն՞ կը խոռվիս.
Աստուծոյ յուսայ, եւ վերստին գովերգէ զայն, ըսելով. «Փրկիչս դուն ես»:
Տէրը ինձի հետ է, ցերեկը՝ իր ցուցաբերած հոգածութեամբ,
գիշերը՝ իր երգով, որ աղօթք է՝ Աստուծոյ, զիս կենդանի պահողին:
Եւ աղօթքիս մէջ Աստուծոյ կ'ըսեմ.
«Դուն ես իմ պաշտպան Վէմս, ինչն՞ մոռցար զիս.
Ինչն՞ համար տրտում ըլլամ, երբ թշնամին կը նեղէ զիս»:
Սակայն ինչն՞ պիտի տխրիմ, եւ կամ ինչն՞ խոռվիմ.
Աստուծոյ պիտի յուսամ, եւ վերստին գովերգեմ զայն, ըսելով.
«Փրկիչս ես դուն, իմ Աստուածս ես»:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՐՈՐՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՅՈՒՐԱ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ ԸՆԴՀԱՆՐԱՎԿԱՆ ՆԱՄԱԿ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ 1:1-4

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Նոր Կրթարանի գիրքերու ցանկին վերջընդեռ նամակը, իսկ ընդհանրական նամակներուն մէջ վերջին նամակը, չնայած, փակաւին ուրիշ 7 նամակներ ալ կան ուղղուած 7 եկեղեցիներուն, որ կը գրենք Յայտնութիւն գիրքին մէջ:

Այս նամակը կը կոչուի Յուդա Տեառնեղբօր Ընդհանրական նամակ: Ո՛վ է Յուդա: Ըստ Մարթէոս (13:55) եւ Մարկոս (6:3) Աւերարանիչներու փոխանցած փեղեկութեանց, Յուդա Յիսուսի ազգական որպէս յիշուած է, «եղբայրներ» անուանուով, որ յաճախ շփոթ արթնցուցած է շարերու մտքին մէջ, որպէս Քրիստոսի հարազատ եղբայրները:

Յուդայի այս նամակը յարուկ հասցեատէր մը չունի, ոմանք կը կարծեն ուղղուած ըլլայ քրիստոնէաներուն, որոնք հելլենիստական հրեութենէն դարձած են: Որովհետեւ այնպէղ նշուած առարկութիւնները կնոստիկեան միտքեր կը շոշափեն: Այս նամակը քրիստոնէական մասնաւոր համայնքի մը ուղղուած չէ, այլ՝ բոլոր ժամանակի քրիստոնէաներուն: Բովանդակութեամբ կը յիշեցնէ Պետրոս Առաքեալի ընդհանրական երկրորդ նամակը, որ կը պայքարի Աւերարանը չարափոխող եւ սխալ ու վնասակար ուսուցումներ փարածող մոլորեցուցիչներու դէմ, որոնք կ'ապրին անբարոյ կեանքով մը:

Չարագովական իր բնոյթով այս նամակը նաեւ կը փոխանցէ հաւաքացեալներուն, որպէսզի անոնք ալ այս օրինակին հետեւելով կարենան ամուր պահել իրենց հաւաքը, այն ինչ որ աւանդուած է, անարբեր չմնան այն բոլոր փեսակի սուր ու մոլար ուսուցումներու նկատմամբ, այլ հեզութեամբ պայքարին հաւաքին համար: Նամակը կը փակուի յորդորներով եւ փառաբանութեամբ:

Չմոռնանք, որ բոլոր ժամանակներուն ալ Աւերարանի պարգամները ենթակայ դարձած են քննադատութեան, արհամարհանքի, ներքին թէ արտաքին ազդակներէ: Յաճախ այս երեւոյթը գայթակղութեան առիթ եղած է հաւաքացեալներուն, որոնք եթէ չեն կրցած դէմ դնել, ապա փեղի են փուած, շար մտածած ու եկած այն համոզմունքին, թէ մի գուցէ ճիշդ են այդ քննադատութիւնները, մի գուցէ իրօք շինծու հեքեաթներ են այնպէղ արձանագրուած: Ահա ճիշդ այս երեւոյթին համար, Յուդա իր այս նամակով կը սորվեցնէ թէ ինչպիսին պէտք է ըլլայ հաւաքացեալներուն, եւ այսօր՝ մեր կեցուածքը հանդէպ Աւերարանին: Պօղոս Առաքեալ այսպէս կ'ըսէ. «**Եղբայրներ, կ'ուզեմ ձեզի յիշեցնել այն Աւերարանը որ իմ քարոզութեամբս ընդունեցիք եւ որուն հաւաքարին կը մնաք: Այդ Աւերարանով ալ կը փրկուիք, եթէ զայն պահէք այնպէս՝ ինչպէս ես ձեզի քարոզեցի. այլապէս զուր փեղ հաւաքացած կ'ըլլաք: Ես ձեզի փոխանցեցի այն Աւերարանը, որ ես ընդունեցի.**» (Ա Կորնթ 15:1-3): Յուդա կոչ կ'ուղղէ որ անարբեր չըլլալ այդպիսի երեւոյթներու նկատմամբ, այլ՝ «**իրարու հոգեւոր աճումին օգնեցէք ձեր սուրբ հաւաքով: Սուրբ Հոգիին օգնականութեամբը աղօթեցէք, եւ դուք ձեզ Աստուծոյ սիրոյն մէջ պահեցէք, սպասելով որ մեր Տէրը Յիսուս Քրիստոս իր ողորմութեամբ յաւիտենական կեանքը փայ ձեզի**» (20-21 հմբ):

Այս նամակին մէջ նաեւ պարգամներ կան գալիքին կապուած: Այնպէս ինչպէս Քրիստոս կանխեց ըսելով թէ ինչ կը սպասուի գալիք ժամանակներուն, այսպէղ եւս կը յիշեցնէ. «**Վերջին ժամանակներուն ամէն ինչ արհամարհող մարդիկ պիտի գան, որոնք իրենց ամբարիշտ ցանկութիւններով պիտի առաջնորդուին**» (18 հմբ): Բոլոր ժամանակներու ընթացքին Եկեղեցին փարբեր առիթներով ու փարբեր կերպերով դէմ կրցած դնել հալածանքներու, նեղութիւններու, եւ այլ փեսակի դժուարութիւններու, եւ կարելի է ըսել որ դուրս եկաւ ադ բոլորէն: Հարցը սակայն, հետեւեալն է, եկեղեցւոյ ունեցած կամ կրած նեղութիւնները եւ դժուարութիւնները արտաքին ու ներքին են: Այն ինչ արտաքին է այդ նեղութիւնն ու հալածանքը շար աւելի դիւրին յաղթահարելը, քան ներքին, որովհետեւ ներքինը արդէն բաժանումի, պարակրումի, քայքայումի փանող երեւոյթ է: Ահա այդ զգուշաորութիւնն է որուն կ'անդրադառնայ Յուդա իր այս նամակով: Այս նամակի բովանդակութեան նմանօրինակը մենք կը գրենք նաեւ Պօղոս Առաքեալի նամակներուն մէջ:

Միւս նամակներուն նման, այս նամակն ալ կը սկսի հեղինակի անունով. «**Ես՝ Յուդա Յիսուս Քրիստոսի ծառան եւ Յակոբոսի եղբայրը, կը գրեմ ձեզի՝ բոլոր ազգերուդ, որ Հայրն Աստուած սիրեց եւ ընտրեց, եւ Յիսուս Քրիստոս պահպանեց**» (1 հմբ): Առաջին իսկ արտայայտութեամբ Յուդա իր խոնարհութիւնը ցոյց կու տայ, թէ ինք Յիսուս Քրիստոսի ծառան է: Իսկ Յիսուսը Քրիստոսն է, այն Օծեալը, որուն դաւանութիւնը փուսա Պետրոս Առաքեալ երբ Քրիստոս հարցուց թէ դուք ինչ կ'ըսէք իմ մասին:

«Աստուած սիրեց եւ ընտրեց, եւ Յիսուս Քրիստոս պահպանեց» (2 հմբ): Աստուած սիրեց, մէկ այլ ուրիշ ձեռագիրներու մէջ գրուած սրբեց եւ ընտրեց: Այո, Աստուած Ինք է որ սիրեց, եւ այդ սիրոյ իբրեւ արտայայտութիւն սրբեց ու ընտրեց: Քրիստոս Ինք պիտի ըսէ թէ Հայրս ձեզ չկանչէ, դուք չէք կրնար ինծի գալ: Իսկ սրբելէ, ընտրելէ յետոյ ալ Քրիստոս կը պահպանէ. **«Ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհիս վախճանը»**, քակաւին Քրիստոս Ինք աղօթեց այսպէս. **«Սուրբ Հայր, անվրանգ պահէ զանոնք քու անունիդ զօրութեամբ»** (Յովհ 17:11):